ՎՐԱՍՏԱՆ (ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ). ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տարածքը՝ 69,7 հազ. կմ²
Բնակչությունը՝ 4,3 մլն մարդ
Մայրաքաղաքը՝ Թբիլիսի
Պետական կարգը՝ նախագահական հանրապետություն

Վրաստանը հազարամյակների պատմություն ունի: Նրա տարածքում հայտնի հնագույն պետություններ են եղել Կոլխիդայի թագավորությունը և Իբերիան, որոնք Ք. ա. 4-րդ դարում միավորված էին Վրաստանի միասնական թագավորության մեջ: 7-րդ դարում երկիրը նվաճեցին արաբները, իսկ 11-րդում՝ սելջուկ թուրքերը: 12-րդ դարում Դավիթ 2-րդ թագավորը վտարեց թուրքերին և երկրում վերականգնեց անկախությունը: Այդ ժամանակ էլ Վրաստանը տնտեսական և քաղաքական առավելագույն հզորության է հասել: Նույն ժամանակ էլ ուժեղացել է հայ-վրացական համագործակցությունն ու զինակցությունը, երբ ստեղծվեց Զաքարյանների հայկական պետությունը:

1801 թվականից Վրաստանը եղել է Ռուսաստանի կազմում: 1918թ. Վրաստանը նորից ձեռք բերեց անկախություն, սակայն երկրում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո 1922թ. մտավ ԽՍՀՄ-ի կազմի մեջ: 1991թ. ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Վրաստանը կրկին անկախություն ձեռք բերեց, դարձավ ՄԱԿ-ի անդամ:

Թվարկե՛ք և քարտեզի վրա ցո՛ւյց տվեք Վրաստանի սահմանակից երկրները:

Վրաստանը մեր հյուսիսային հարևանն է և բարեկամ: Գործող սահմանադրության համաձայն այն դաշնային պետություն է: Նրա կազմում են ինքնավար մի քանի պետական տարածքային կազմավորումներ՝ Աջարիան, Աբխազիան և Հարավային Օսեթիան: Սակայն դրանց կարգավիճակը վերջնականապես կարգավորված չէ: 2008թ. Աբխազիան և Հարավային Օսեթիան իրենց անկախ հռչակեցին և դուրս եկան Վրաստանի կազմից:

Նրանց անկախությունը ճանաչեց Ռուսաստանը: Վրաստանը չի հաշտվում այդ իրողության հետ և շարունակում է լարված հարաբերության մեջ գտնվել նրանց անկախության գործընթացին նպաստած Ռուսաստանի հետ:

Իրենց հերթին հետխորհրդային զարգացումները, մշտական հակամարտությունները խոչընդոտում են Վրաստանի տնտեսական առաջընթացին:

Պետության ղեկավարը նախագահն է, ով օժտված է մեծ լիազորություններով: Կառավարությունը ղեկավարում է վարչապետը: Երկրի օրենսդիր մարմինը խորհրդարանն է:

Վրաստանն ունի շատ հարմար աշխարհագրական դիրք՝ Սև ծովի արևելյան ափին գտնվելու շնորհիվ: Ծովը Վրաստանի հարստության աղբյուրն է: Երկրի աշխարհագրական դիրքը նպաստավոր է նաև այն պատճառով, որ ունի տարանցիկ տրանսպորտային դիրք Ռուսաստանի, Հայաստանի, Ադրբեջանի, ինչպես նաև Կենտրոնական Ասիայի և Սև ծովի ավազանի երկրների միջև: Այդ դիրքի շնորհիվ Վրաստանը մեծ եկամուտ է ստանում: Վրաստանի սևծովյան նավահանգիստներով են հիմնականում իրականացվում Հայաստանի տնտեսական կապերը Ռուսաստանի, Ուկրաինայի և Եվրոպայի մյուս երկրների հետ:

Չնայած ոչ մեծ տարածքին՝ Վրաստանի բնական պայմանները խիստ բազմազան են: Վրաստանը լեռնային երկիր է, տարածքի մոտ 80 %-ը զբաղեցնում են երիտասարդ լեռնաշղթաներն ու բարձրությունները: Հյուսիսում Մեծ Կովկասի, իսկ հարավում՝ Փոքր Կովկասի լեռներն են: Դրանք միմյանց միացած են միջօրեականի ուղղությամբ ձգվող Լիխի լեռներով: Լեռների միջև ընկած են Ջավախքի սարահարթը (հարավում), արևմուտքում Կոլխիդայի դաշտավայրն է, արևելքում՝ Ալազանի հովիտը:

Վրաստանի կլիման ծովափնյա գոտում խոնավ մերձարևադարձային է: Դեպի արևելք կլիման դառնում է ավելի ցամաքային: Այդ պատճառով էլ արևմուտքում տարածված են փարթամ անտառներ, իսկ արևելքում՝ բերրի սևահողերով ծածկված տափաստանները: Արևելքում այնքան չոր է, որ առանց ոռոգման մշակաբույսեր չեն աճում: Արևմտյան և արևելյան մարզերի միջև սահմանագիծ է Լիխի լեռնաշղթան, որն արգելակում է արևմտյան խոնավ օդային զանգվածների մուտքը արևելք:

Լեռներում լավ արտահայտված վերընթաց գոտիականությունը հնարավորություն է տալիս աճեցնելու բազմազան մշակաբույսեր:

Վրաստանի խոշոր գետերն են Կուրը (Արագվի և Ալազան վտակներով) և Ռիոնը: Գետային ցանցը խիտ է հատկապես խոնավ արևմուտքում: Վրաստանի բոլոր գետերն էլ մեծ անկման ու ջրառատության շնորհիվ ունեն ջրաէներգետիկ մեծ կարողություններ: Գետերի ջրերն օգտագործվում են էներգետիկ և ոռոգման նպատակով:

Վրաստանում լճեր շատ կան: Դրանցից ամենախոշորը և ամենանշանավորը Ռիցան է՝ իր գեղատեսիլ բնությամբ:

Հարուստ և բազմազան է Վրաստանի բուսական աշխարհը: Այստեղ կան շատ էնդեմիկ բուսատեսակներ: Վրաստանի տարածքի 40 %-ը ծածկված է անտառներով, և նա համարվում է տարածաշրջանի ամենաանտառապատ երկիրը: Անտառներն ունեն արդյունաբերական, դաշտապաշտպան և առողջապահական նշանակություն: Դրանք հարուստ են վայրի պտուղներով, հատապտուղներով, որսամթերվող կենդանիներով:

Լեռներում անտառներից վերև տարածվում են ալպյան մարգագետինները, որոնք ամառային հարմարավետ արոտավայրեր են:

Բուսական և կենդանական աշխարհի պահպանման նպատակով երկրում ստեղծվել են մի շարք արգելոցներ, օրինակ՝ Բորժոմի, Ռիցայի:

Վրաստանի օգտակար հանածոներից գլխավորներն են մանգանը (Ճիաթուրայի հանքավայր), քարածուխը (Տղիբուլի, Տղվարչելի), պղինձը (Մարնեուլի), շինանյութերը:

Ճիաթուրայի մանգանի հանքաքարի տեղափոխման արտադրամաս

Վրաստանը հարուստ է ռեկրեացիոն ռեսուրսներով: Բնական հակադրություններով հարուստ լանդշաֆտները, մեղմ կլիման, հանքային ու տաք ջրերը, գետերը, լճերը, կարստային քարանձավները, փարթամ բուսականությունը, ինչպես նաև լեռների ու տաք ծովի հարևանությունը ստեղծել են ռեկրեացիոն ռեսուրսների հազվադեպ զուգակցություն: Այդ ամենի շնորհիվ Վրաստանը դարձել է միջազգային նշանակության զբոսաշրջության և առողջարանային շրջան:

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Վրացիներն աշխարհի հնագույն ժողովուրդներից են և ձևավորվել են վրացական տարբեր ցեղերի միավորումից: Վրաստանի տարածքը մարդը յուրացրել է շատ հազարամյակներ առաջ: Այստեղ հայտնաբերվել են քարի և բրոնզի դարի նյութական մշակույթի հուշարձաններ:

Հայկական հին ձեռագրերում Վրաստանն անվանվել է Վիրք:

Վրացիներն իրենց անվանում են քարթվելներ, իսկ իրենց հայրենիքը՝ Սաքարթվելո: Վրացերենը պատկանում է Կովկասյան լեզվաընտանիքի քարթվելական լեզվախմբին:

Ներկայիս Վրաստանը բազմազգ երկիր է. այստեղ ապրում են մի քանի տասնյակ ժողովուրդներ: Բնակչության 75 %-ը վրացիներ են, 8 %-ը՝ հայեր, 5 %-ը՝ ադրբեջանցիները: Այստեղ ապրում են նաև հույներ, քրդեր, օսեր, աբխազներ, ռուսներ, լեզգիներ և այլք:

Հավատացյալ բնակչությունը հիմնականում դավանում է քրիստոնեություն (վրացիներ, հայեր, ռուսներ, օսեր, հույներ): Քրիստոնեությունը Վրաստան մուտք է գործել 4-րդ դարից: Երկրում մահմեդականություն դավանում են աջարները (մահմեդական վրացիները), ադրբեջանցիները:

Վրաստանի բնակչության բնական աճը ամենացածրն է Հարավարևմտյան Ասիա տարածաշրջանում: Վրաստանը տարածաշրջանի միակ պետությունն է, որի բնակչության աճը բացասական է (-0,6 %), այսինքն՝բնակչությունը դեպոպուլյացիայի փուլում է: Պատճառը ծնելիության ցածր և մահացության բարձր մակարդակն է:

Վրաստանի բնակչության միջին խտությունը բարձր չէ՝ 62 մարդ/կմ^2: Առավել խտաբնակ են հարթավայրերի, նախալեռնային երկրագործության զարգացած շրջաններն ու ծովափնյա նեղ շերտը: Թույլ են բնակեցված Կոլխիդայի ճահճապատ դաշտավայրը և բարձրլեռնային գոտին:



Թբիլիսիի համայնապատկերը

Ուրբանիզացման մակարդակով Վրաստանն աշխարհում միջին տեղ է գրավում: Քաղաքներում բնակվում է բնակչության 53 %-ը:

Խոշոր քաղաքներն են Թբիլիսին (1,2 մլն բնակիչ), Քութաիսին, Ռուսթավին, Բաթումը:

Մայրաքաղաք Թբիլիսին աշխարհի հնագույն քաղաքներից է. այն ավելի քան 1500 տարեկան է: Նրա անվանումն առաջացել է «Թբիլի»՝ «տաք» բառից, որովհետև քաղաքի շրջակայքում կան տաք աղբյուրներ: Թբիլիսիում կան հինավուրց բազմաթիվ դղյակներ ու ամրոցներ: Բազմաթիվ թանգարաններից բացի քաղաքում մեծ հետաքրքրություն են ներկայացնում սուրբ Սիոնի տաճարը (5-րդ դար) և սուրբ Դավիթի եկեղեցին (6-րդ դար):

Թբիլիսին Վրաստանի տնտեսական, վարչաքաղաքական և մշակութային խոշոր կենտրոնն է:

Ռուսթավին երիտասարդ քաղաք է, մետաղաձուլության կենտրոն: Բորժոմը, Ծղալտուբան հանրահայտ առողջարաններ են: Խոշոր նավահանգիստ ու հանրահայտ առողջարան է Բաթումը: Նրա մերձակայքում կա բուսաբանական հիասքանչ այգի:

Վրացիները նշանակալի ավանդ ունեն համաշխարհային մշակույթի գանձարանում: Վրաց դպրության հնագույն հուշարձանը Երուսաղեմի մոտ հայտնաբերված խճանկարային արձանագրությունն է (5-րդ դարի 1-ին կես): Վրաստանի տարածքում ճարտարապետական հնագույն հուշարձանները պատկանում են Ք. ա. 5-րդ հազարամյակին: Վրացական արվեստի ազգային յուրօրինակությունը հատկապես ակնհայտ է միջին դարերի հուշարձաններում (ամրոցներ, պալատներ, կամուրջներ, տաճարներ ու եկեղեցիներ): Վրաստանը հնագույն և բարձր զարգացած երաժշտական մշակույթի երկիր է, որի մասին վկայում է ինքնատիպ երաժշտական բանահյուսությունը: Վրացական երգերը հիշատակում է Ք. ա. 4-րդ դ. հույն պատմիչ Քսենոֆոնը: Վրաց ժողովրդի պարարվեստը ևս ունի դարերի վաղեմություն: Հնագիտական պեղումները վկայում են Վրաստանի թատերական մշակույթի հնագույն արմատների մասին:

Պատմագիտական հավաստի աղբյուրների համաձայն ժամանակակից Վրաստանի տարածքում դեռևս հնագույն ժամանակներից եղել են հայաբնակ գավառներ: Վրաստանում հաստատված հայերը որպես լիիրավ քաղաքացիներ մասնակցել են երկրի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքին:

Հայերը, շարունակաբար ապրելով վրացիների հարևանությամբ՝ նրանց հետ կառուցել ու շենացրել են Վրաստանը, ստեղծել երկու ժողովուրդների համար առանցքային նշանակության արժեքներ՝ գրչության ու գրականության, արվեստի ու ճարտարապետության, կերպարվեստի ու երաժշտության, թատրոնի ու մշակույթի և բազմաթիվ այլ ոլորտներում: Այդ ամենն իր զարգացման գագաթնակետին է հասել 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին

քառորդում, երբ Թիֆլիսը դարձել է հայ մշակույթի ամենախոշոր կենտրոնը Կովկասում: 7-րդ դարից հայերը մեծ դեր ունեն Թբիլիսիի կառուցապատման գործում:

Հայերի թիվը Վրաստանում ներկայումս մոտ 350 հազար է: Երկրում գործում են 150-ից ավելի հայկական դպրոցներ, եկեղեցիներ, գրական, մշակութալուսավորչական, հասարակական, քաղաքական մի շարք կազմակերպություններ:

Վրաստանը **բազմաճյուղ տնտեսություն** ունեցող երկիր է: Դրա զարգացման գլխավոր նախադրյալներն են՝ նպաստավոր աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները, բնական ռեսուրսների բազմազանությունն ու բավարար աշխատանքային ռեսուրսները: Տնտեսության զարգացման հզոր գործոն է նաև Սև ծովը:

Աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանմանը Վրաստանն ավանդաբար մասնակցել է որպես մանգանի հանքաքար, էլեկտրաքարշեր, հաստոցներ, թեյ, ցիտրուսներ, գինիներ արտադրող երկիր: Ներկայումս այդ մասնակցությունը զգալիորեն նեղացել է՝ երկրի տնտեսական անկման պատճառով:

Երկրի էկոնոմիկայում առաջատարն արդյունաբերությունն է: Այս ոլորտում զբաղված է աշխատուժի 20 %-ը:

Վրաստանի արդյունաբերության կարևոր ճյուղը էներգետիկան է: Արդյունահանում են քարածուխ, քիչ քանակությամբ՝ նավթ, որը չի բավարարում երկրի վառելիքի ամբողջ պահանջարկը, ուստի ներմուծվում է նավթ, նավթամթերք, բնական գազ:

Էլեկտրաէներգիայի տարեկան արտադրանքը մինչև վերջերս չէր բավարարում երկրի պահանջները և այն ևս ներմուծվում էր: Վերջին տարիներին կառուցվել են նոր էլեկտրակայաններ և հզորացվել են հները, ինչի շնորհիվ այժմ էլեկտրաէներգիան բավարարում է երկրի պահանջարկը:

Վրաստանի մշակող ճյուղերից զարգացած են մետաղաձուլությունը, մեքենաշինությունը, քիմիական, թեթև և սննդի արդյունաբերությունը:

Ճիաթուրայի մանգանի հանքաքարի, ներմուծվող երկաթաքարի և սեփական քարածխի բազայի վրա Ռուսթավիում աշխատում է Հարավային Կովկասի լրիվ ցիկլի մետաղաձուլական միակ կոմբինատը: Այս ձեռնարկությունում արտադրում են նաև ազոտական պարարտանյութեր: Մարնեուլում արդյունահանում և հարստացնում են պղնձի հանքաքար:

Խորհրդային տարիներին Թբիլիսիում արտադրում էին էլեկտրաքարշեր և ինքնաթիռներ, Քութաիսիում՝ տրակտորներ և բեռնատար ավտոմեքենաներ, Բաթումում և Թբիլիսիում՝ գյուղատնտեսական մեքենաներ և սննդի ու թեթև արդյունաբերության համար անհրաժեշտ մեքենաներ: Ներկայումս այդ արտադրությունները դեռևս չեն գործում:

Վրաստանի քիմիական արդյունաբերությունը ներկայացված է հանքային պարարտանյութերի, արհեստական մանրաթելերի, ներկանյութերի, դեղո-

բայքի, կենցաղային քիմիական իրերի արտադրությամբ: Դրանց ձեռնարկությունները գտնվում են Ռուսթավիում և Քութահիսիում:

Վրաստանը բացառիկ նպաստավոր պայմաններ ունի սննդարդյունաբերության զարգացման համար: Արդյունաբերության ճյուղերի շարքում համախառն արտադրանքի ծավալով այն առաջին տեղում է: Սննդարդյունաբերությունն աշխատում է տեղական հումքով և թողարկում է բազմատեսակ արտադրանք՝ թեյ, գինիներ, զանազան պահածոներ, հանքային ջրեր («Բորժոմ»), ծխախոտ:

Վրաստանի բնակլիմայական պայմաններն ընդհանուր առմամբ նպաստավոր են բազմաճյուղ **գյուղատնտեսության** զարգացման համար: Սակայն լեռնային բարդ ռելիեֆի և բարձր անտառապատվածության պատճառով գյուղատնտեսական նպատակներով օգտագործվում է տարածքի 1/3-ը, իսկ որպես վարելահողեր՝ 16 %-ը:

Կայուն բերքի ապահովման համար կատարվում է հողաբարելավման աշխատանքներ:

Հողաբարելավման ինչ աշխատանքներ կտարվեն Վրաստանի արևելյան և արևմտյան շրջաններում: Հիմնավորեք:

Նկատելի է երկրի Արևմուտքի և Արևելքի գյուղատնտեսական մասնագիտացման տարբերությունը: Արևմուտքի խոնավ մերձարևադարձային պայմաններում աճում են եգիպտացորեն, ցիտրուսներ, թեյ, դափնի, ծխախոտ: Տնտեսական մեծ նշանակություն ունի թեյի մշակությունը, բայց վրացական թեյն իր որակական հատկանիշներով զիջում է չինական և ցեյլոնյան թեյին:

Արևմուտքում մեծ տարածում ունի տունգի ծառը, որի պտղից ստացած յուղն օգտագործվում է լաքերի և ներկերի արտադրության մեջ:

Արևելյան չոր մերձարևադարձային շրջաններում գլխավորապես մշակում են խաղող, ցորեն, կարտոֆիլ: Վրաստանը խաղողի մշակության հնագույն շրջաններից է: Նշանավոր է Ալազանի հովտի խաղողը, որից պատրաստում են Կախեթի հռչակավոր գինիները:

Վրաստանի անասնապահությունը թույլ է զարգացած: Այն մասնագիտական ճյուղ է միայն լեռնային որոշ շրջաններում, որտեղ շատ են ամառային արոտները և խոտհարքները:

Վրաստանի արևելյան շրջաններում զարգացած է ոչխարաբուծությունը, իսկ արևմուտքում՝ խոզաբուծությունը, շերամապահությունը և թռչնաբուծությունը:

Վրաստանի տնտեսության մեջ շատ կարևոր տեղ է գրավում **առողջարանային տնտեսությունը**: Դրան նպաստել են բնական և սոցիալ-մշակութային բարենպաստ պայմանները: Դրանք, ինչպես նաև հյուրընկալության ինդուստրիայի առաջընթացը, վերջին տարիներին նպաստել են **զբոսաշրջության** կտրուկ զարգացմանը: Վրաստանի ծովափնյա գոտում ամեն տարի իրենց հանգիստն են անցկացնում տասնյակ հազարավոր հայաստանցիներ:

Վրաստանում առկա են ժամանակակից **տրանսպորտի** բոլոր տեսակները: Դրանցից առաջինը երկաթուղայինն է: Այն սպասարկում է ներքին շրջանների մեծ մասը և դրանք կապում է ծովային նավահանգիստների հետ: Դրա դերն էլ ավելի կմեծանա Թբիլիսի-Ախալքալակ-Կարս կառուցվող երկաթուղու շահագործումով: Երկաթուղային խոշոր հանգույցը Թբիլիսին է:

Ավտոմոբիլային տրանսպորտը ևս մեծ դեր ունի ներքին և արտաքին բեռնափոխադրումների համար: Վրաստանը ավտոմոբիլային կապ ունի հարևան բոլոր երկրների հետ:

Վրաստանն ունի նաև ծովային տրանսպորտ: Խոշոր նավահանգիստներն են Բաթումը և Փոթին:

Վրաստանի տարածքով է անցնում Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը:

Օդային ուղիներով Վրաստանը կապված է աշխարհի շատ երկրների հետ:

Վրաստանն արտաքին աշխարհի հետ տնտեսական սերտ կապերի մեջ է: Արտահանում է հիմնականում թեյ, ցիտրուսներ, դափնետերև, գինիներ, մանգանի հանքաքար, խողովակներ, մեքենաշինական որոշ արտադրանք, քիմիական պարարտանյութեր: Ներմուծում է հացահատիկ, նավթ և բնական գազ, արդիական մեքենասարքավորում:

Վրաստանի առևտրական հիմնական գործընկերներն են՝ Թուրքիան, Գերմանիան, Իտալիան, Ադրբեջանը, Ուկրաինան, Թուրքմենստանը:

Բազմազան և բազմաբնույթ են Վրաստանի և Հայաստանի տնտեսական կապերը:

Ո՞ր ոլորտներում են դրսևորվում դրանք: